ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

ՀՏԴ 711.132

DOI: 10.56246/18294480-2023.15-08

ՊՈՏՈՍՅԱՆ ԱԿՍԵԼ
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ,
աշխարհագրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

էլփոստ՝ a.potosyan@ysu.am

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԱ
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետ,

տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոս

էլփոստ՝ sveta.safaryan@ysu.am

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԻՆՆԱ
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի

«Զբոսաշրջություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

էլփոստ՝ i.saribekyan@list.ru

Տարաբնակեցման մեջ տեղի ունեցող փոփոխությունները և զարգացման միտումներն իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողնում առանձին տարածքների, շրջանների և երկրների տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման և հասարակության տարածքային կազմակերպման վրա: Վերջիններս առանձնահատուկ գծերով է դրսևորվում լեռնային երկրներում և նրա առանձին տարածաշրջաններում, մասնավորապես ՀՀ սահմանամերձ Տավուշի մարզում:

Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման խնդիրներն առավել արդիական են դարձել հատկապես անկախության տարիներին, երբ դրանց զարգացումը, ամրացումը, կայունացումը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը դարձան պետության համար ռազմավարական կարևոր խնդիրներ: 2020թ. հայտնի իրադարձություններից հետո ՀՀ սահմանամերձ տարածքների, այդ թվում նաև Տավուշի մարզի գյուղական տարածքների և տարաբնակեցման համակարգի կատարելագործումը համարվում են մեր երկրի անվտանգային համակարգի ապահովման կարևոր բաղադրիչներից մեկը:

Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի առկա հիմնախնդիրների լուծումը կախված է տարբեր գործոններից: Դրանց թվում առանձնահատուկ նշանակություն ունի նաև մարզի գյուղական տարաբնակեցումը, մասնավորապես վերջինիս զարգացման, գյուղական բնակչության թվի շարժընթացը և վեարտադրության արդի միտումները, առկա հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը:

---

[1] Աշխատանքն իրականացվել է **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները»** դրամաշնորհային նախագծի շրջանակներում:

Հոդվածում տրված է Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման ձևավորման և զարգացման վերլուծությունը: Քննարկվել են մարզի գյուղական բնակչության, բնակավայրերի թվի և վերարտադրության ցուցանիշների շարժընթացի հարցերը և դրանցով պայմանավորված հիմնախնդիրները:

Բանալի բառեր՝ *Տավուշի մարզ, գյուղական տարաբնակեցում, գյուղական բնակչություն և բնակավարեր, շարժընթացի միտումներ, բնակչության վերարտադրություն, հիմնախնդիրներ:*

Ներածություն: Տարաբնակեցումը հասարակության տարածքային կազմակերպման հենքն է: Տարաբնակեցման մեջ տեղի ունեցող փոփոխությունները և զարգացման միտումներն իրենց նշանակալից ազդեցությունն են թողնում տարածքների յուրացման, երկրների և տարածաշրջանների տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, տեղաբաշխման, ինչպես նաև երկրի պաշտպանունակության կազմակերպման ու ամրապնդման վրա:

Տարաբնակեցման վերը նշված որոշիչ դերը և նշանակությունը՝ տարածքների յուրացման, սոցիալ-տնտեսական զարգացման և հասարակության տարածքային կազմակերպման գործում առանձնահատուկ գծերով է դրսևորվում լեռնային երկրներում և նրա առանձին տարածաշրջաններում, մասնավորապես ՀՀ սահմանամերձ մարզերից մեկում՝ Տավուշում:

Տասնամյակներ շարունակ տարաբնակեցման գործառութային նշված կողմերի իրականացման համար թե՛ խորհրդային և թե՛ հետագա ժամանակահատվածում մեր երկրում ձեռնարկվել և իրականացվել են սոցիալ-տնտեսական, վարչական, կրթամշակութային և այլ գործընթացներ՝ հանրապետության տարբեր շրջանների, այդ թվում նաև Տավուշի մարզի բնակավայրերի զարգացումը խթանելու և դրանցում առկա հիմնախնդիրները լուծելու համար:

Տավուշի մարզի գյուղական տարածքների, տարաբնակեցման և առանձին բնակավայրերի առկա հիմնախնդիրների լուծման գործում իր դերն ունի նաև գյուղական տարաբնակեցման զարգացման, մասնավորապես գյուղական բնակչության թվի շարժընթացի և վերարտադրության արդի միտումների վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը: Ստացված արդյունքները հնարավորություն կտան հանրապետական և մարզային կառավարման մարմիներին իրականացնել հասցեական և նպատակային քաղաքականություն մարզի գյուղական բնակավայրերի առկա հիմնախնդիրների լուծման համար:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը, սկզբնաղբյուրները: Աշխատանքի կատարման համար հիմք են հանդիսացել լեռնային երկրների, մասնավորապես ՀՀ գյուղական տարածքների և տարաբնակեցման հետազոտության տեսամեթոդական առկա գրականությունը [1,2,3,4,5,6,7], ՀՀ-ի և Տավուշի մարզի տարաբնակեցման, բնակչության վերարտադրության, ժողովրդագրական գործընթացների և տարածքային համաչափ զարգացման վերաբերյալ գիտական հրապարակումները [8,9,10,11,12,13,14]: Որպես սկզբնաղբյուրներ՝ օգտագործվել են առկա վիճակագրական ժողովածուները [15,16], ՀՀ վիճակագրական պետական կոմիտեի՝ ՀՀ-ի և մարզերի գյուղական բնակչության ու բնակավարերի թվի և վերարտադրության վերաբերյալ տարբեր տարեթվերի բազային տվյալները [17,18,19,20,21], ինչպես նաև հեղինակային խմբի կողմից դաշտային ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված տվյալները:

Աշխատանքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և համեմատական աշխարհագրական մեթոդները, ինչպես նաև տարածաժամանակային և հիմնախնդրային մոտեցումները:

Տավուշի մարզի գյուղական տարածքների ձևավորման և զարգացման նախադրյալները: Տավուշի մարզը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում: Այն հիմնականում ընդգրկում է Աղստևի, Կուրի վտակներ Ոսկեպար, Հախում և Տավուշ գետերի վերին ու միջին հոսանքների ավազանները: Տավուշի տարածքում կարևոր տեղ ունի Աղստևի հովիտը, որտեղով անցնում է ՀՀ-ի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող Դիլիջան - Իջևան - Նոյեմբերյան - Վրաստան միջպետական ավտոմայրուղին: Այն պետական սահման ունի Ադրբեջանի (300 կմ) և Վրաստանի (50 կմ) հետ: Զբաղեցնում է 2704 կմ^2 տարածք (ՀՀ տարածքի 9,1%-ը):

Աղյուսակ 1.

Տավուշի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը (1831-2022 թթ.) [15, 16,17]:

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչ. խտությունը	Գյուղերի միջ. մարդաքանակը
	քաղաքային	գյուղական	ընդամենը	քաղաքային	գյուղական			
1831	-	36	12201	-	12201	4.5	4.5	339
1897	-	62	43401	-	43401	17.5	16.0	700
1926	-	100	62620	-	62620	23.2	23.2	626
1959	2	112	99124	19051	80073	36.7	29.6	715
1970	5	63	127436	42574	84862	47.1	31.4	1347
1979	6	64	135305	53686	81619	50.0	30.2	1275
1989	6	61	137527	61902	75625	50.9	30.0	1240
2001	4	61	134376	50721	83655	49.7	30.9	1417
2011	5	62	128609	54186	74423	47.6	27.5	1240
2015	5	62	126677	53536	73141	46.9	27.0	1219
2022	5	60	119700	49700	70000	44.3	25.9	1206

Մարզին 2022թ-ի դրությամբ բաժին էր ընկնում ՀՀ բնակչության 4,0%-ը, գյուղական բնակչության 6,5%-ը և քաղաքային բնակչության 2,6%-ը[16,17]:

Մարզն աչքի է ընկնում մակերևույթի բազմազանությամբ: Այն մեր երկրի ամենալեռնոտ և մասնատված մակերևույթ ունեցող շրջաններից է: Տարածքի մակերևույթին բնորոշ են զառիվեր լանջերով խորը ձորերն ու կիրճերը: Կան էրոզիոն ներգործության հետևանքով առաջացած ռելիեֆի ձևեր, առանձին տարածքներում՝ կարստային ձևեր և սողանքային տեղամասեր: Առավել ակտիվ են Հաղարծնի, Գոշի, Վազաշենի, Աչաջրի, Գետահովտի, Ակնաղբյուրի, Այրումի, Գանձաքարի գոտիների սողանքները [8,23]: Ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն ունեցող

տարածքները կազմում են մոտ 29%-ը, իսկ մինչև 1500 մ՝ շուրջ 60%-ը, 2000 մ-ից բարձր է մարզի տարածքների 7-8%-ը: Տարածված են 12^0-ից բարձր թեքություն ունեցող լանջերը [8,23]: Մարզի տարածքի մեծ մասն ունի բարեխառն տաք և չափավոր խոնավ կլիմա: Ցածրադիր տարածքներում կլիման մերձարևադարձային է: Տավուշն ունի գետային խիտ ցանց: Տավուշի տարածքի մոտ 40,3% անտառապատ է[18]: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 110675.7 հա կամ տարածքի մոտ 41%-ը: Գյուղական տարածքների զարգացման համար առանձնակի նշանակություն ունեցող վարելահողերը կազմում են մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի 23%-ը [18]: Հողակլիմայական համեմատաբար բարենպաստ պայմանների ու անտառային հարուստ ռեսուրսների համեմատ մարզն աղքատ է հանքահումքային ռեսուրսներով: Տավուշը ՀՀ-ում առանձնանում է նաև բազմազան ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներով:

Տավուշի մակերևույթի նշված առանձնահատկությունները, հողակլիմայական և լանդշաֆտային պայմաններն իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողել մարզի բնակավայրերի ցանցի և տարաբնակեցման համակարգի ձևավորման վրա: Այդ է պատճառը, որ մշակության համար պիտանի հողատարածքները և գրեթե ամբողջ բնակչությունը և բնակավայրերը կենտրոնացված են գետահովիտներում, որոնք պիտանի են բնակեցման և տնտեսական գործունեության համար:

Մարզի բնակեցման, բնակավայրերի ձևավորման և զարգացման վրա իրենց ազդեցություն են թողել նաև պատմական և ենթակառուցվածքային գործոնները: Այն ոչ միայն ՀՀ-ի, այլ նաև Հայկական լեռնաշխարհի առավել վաղ և խիտ բնակեցված շրջաններից է: Այստեղ հարյուրամյակներ շարունակ ձևավորվել, ավերվել և կործանվել են հարյուրավոր բնակավայրեր, որի վկայությունն են համարվում մարզի տարածքում պահպանված նյութական և հոգևոր մշակութային հարուստ ժառանգությունը:

XVIII դարի երկրորդ կեսից Արցախից արտագաղթած տասնյակ հազարավոր հայերի մի զգալի մասը հաստատվել է նախորդ տասնամյակների ընթացքում հայազգի բնակչության մեծ մասը կորցրած Տավուշի մարզի ժամանակակից տարածքի տարբեր հատվածներում [8,22]:

Աղյուսակ 2.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի փոփոխությունները(1831-2022թթ.)[8,15,17,18,20,21]:

Տարածաշրջանները և մարզը	Տարեթվեր								
	1831	1897	1926	1959	1970	1988	2001	2011	2022
Իջևանի	51961 / 5	21033 / 33	28124 / 43	24962 / 44	29231 / 27	28978 / 27	33732 / 27	33041 / 28	32900 / 27
Նոյեմբերյանի	3942 / 11	11100 / 15	14354 / 22	23297 / 32	27290 / 18	24191 / 18	26475 / 17	21910 / 18	20800 / 17
Տավուշի	3063 / 10	11268 / 14	20142 / 35	31814 / 36	28341 / 18	22456 / 16	23445 / 16	19472 / 16	16300 / 16
Տավուշի մարզում	12201 / 36	43401 / 62	62620 / 100	80073 / 112	84862 / 63	75625 / 61	83635 / 60	74423 / 62	70000 / 60

Մարզի բնակեցման նոր ալիքը կապված է 1828-1830 թթ. ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հետ, որոնք առաջացրին բնակչության զանգվածային ներգաղթ նաև դեպի Տավուշի մարզ: 1831թ.-ին մարզում բնակչության թիվը կազմում էր 12201 մարդ[աղ.1], իսկ գյուղերի թիվը 36-ն էր: Այդ ժամանակ Նոյեմբերյանի տարածաշրջանում առավել խոշոր գյուղերից էին Բերդավանը՝ 1078 մարդ, Կոթին՝ 777 մարդ, Կողբը՝ 502 մարդ[15]: Բնակչության առավել մեծ թիվ ուներ Իջևանի տարածաշջանը: Այստեղ մշտական բնակչություն ունեցող 15 գյուղում ապրում էր 5162 մարդ[աղ.1]: Իջևանի տարածաշրջանում այդ ժամանակ բնակչության թվով առավել խոշոր էին Սևքար (1019 մարդ), Աչաջուր (889 մարդ) և Սարիգյուղ (450 մարդ) գյուղերը: Մարզկենտրոն Իջևանն ուներ 440 բնակիչ[15]: Տավուշի տարածաշրջանը կամ ներկայիս Բերդ համայնքն ուներ բնակեցված 10 գյուղ, որոնցում բնակչության թիվը կազմում էր 3063 մարդ: Այստեղ բնակչության թվով առավել մեծ էին Այգեձորը՝ 484 մարդ, Թաթլուն՝ 457 մարդ, Չորաթանը՝ 413 մարդ[15]: 1831-1897թթ. Տավուշի մարզի ժամանակակից տարածքում բնակչության թիվն ավելացել է 31200-ով կամ 72% -ով, իսկ բնակավայրերի թիվը 36-ից հասել է 62-ի [աղ.1, 2]:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ռազմավարական բնույթի ճանապարհների շինարարությունը (Երևան -Սևան -Դիլիջան -Իջևան -Թիֆլիս, Վանաձոր -Դիլիջան -Իջևան -Նոյեմբերյան -Այրում), ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ճանապարհների վերակառուցումը մեծ դեր է խաղացել մարզի բնակեցման, բնակավայրերի ձևավորման ու զարգացման գործում[8,22]: Այդ ամենի շնորհիվ մարզում 1897-1926թթ.-ի ընթացքում բնակավայրերի թիվն ավելացել է 38-ով և հասել է 100-ի, իսկ բնակչության թիվն ավելացել է 30,7%-ով կամ 19219-ով [աղ.1, 2]: Մեծ դեր ունեցավ նաև երկաթուղագծերի շինարարությունը: Դրանց կառուցման բանավանները և կիսակայարանները հետագայում վերածվեցին կայարանամերձ ավանների:

Տավուշում բնակչության առավելագույն թվաքանակ գրանցվել է 1989թ.-ի մարդահամարի ժամանակ՝ 137527 մարդ, իսկ գյուղական բնակչության թիվն առավել մեծ ցուցանիշ է ունեցել 1970թ.-ին՝ 84862 մարդ: Մարզում բնակավարերի ընդհանուր թիվն առավելագույնը եղել է 114, որից 2-ը՝ քաղաք, մնացած 112-ը՝ գյուղ[աղ.1]: 1831-2022թթ.-ի ընթացքում Տավուշի մարզի բնակչության և բնակավայրերի թվի փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 1 և 2 աղյուսակների տվյալները:

Մարզի բնակեցման ու զարգացման համար առանձնահատուկ դեր է խաղացել նաև նրա ՏԱԴ-ը: Խորհրդային տարիներին Տավուշի տարածքով ՀՀ էին մուտք գործում գլխավոր երկաթուղիները, ավտոմայրուղին, գազատարը: Մարզով էր անցնում ՀՀ Անդրկովկասի միասնական էներգահամակարգին կապող էլեկտրահաղորդման գիծը: Դրանք, անշուշտ, իրենց դրական դերն են ունեցել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակավարերի առաջընթացի համար: Ադրբեջանի կողմից ՀՀ տրանսպորտային շրջափակման և միջպետական հաղորդակցության բացակայության պայմաններում մարզի ՏԱԴ-ի հնարավորությունների այդ հատվածը, ըստ էության, վերջին ավելի քան 33 տարվա ընթացքում սառեցված են և չեն ծառայում ինչպես մարզի, այնպես էլ առանձին բնակավայերի զարգացմանը: ՀՀ անկախացումից հետո մարզի տնտեսությանը, բնակավայրերի զարգացմանը խոչընդոտող գործոն է դարձել Ադրբեջանի հետ սահմանակից լինելը, որն առաջացնում է հավելյալ անվտանգային ռիսկեր՝ մարզի գյուղատնտեսական հողատարածքների, ընդերքի ու ջրային պաշարների օգտագործման և բնակչության համար: Մարզի բնակավայրերից 47-ը սահմանամերձ են[18]: Դրանցում ապրում է մարզի բնակչության կեսից ավելին, գյուղական բնակչության՝ 72%-ը:

Այսպիսով, Տավուշի տարածքի վերը նշված աշխարհագրական պայմաններն ու գործոնները զգալիորեն նեղացնում են բնակեցման արեալը և իրենց ազդեցությունն են թողնում գյուղական տարաբնակեցման զարգացման վրա: Մյուս կողմից՝ հասարակական զարգացման գործընթացներին զուգընթաց գնալով

մեծացել և մեծանում է բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման զարգացման վրա արտադրական, ոչ արտադրական, ենթակառուցվածքային, աշխարհաքաղաքական, տարածաշրջանայն և այլ գործոնների ազդեցության աստիճանը:

Հետազոտության արդյունքները: 2022թ.-ի հոկտեմբերի դրությամբ Տավուշի մարզի բնակչության թիվը կազմել է 119,7 հազար մարդ, որից 49,7 հազարը՝ քաղաքային, 70 հազարը՝ գյուղական: Հարկ է նկատել, որ ՀՀ մարզերի գյուղական բնակչության տվյալները համայնքների կողմից ներկայացրած «գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվությունների հիման վրա ունի որոշակի տարբերություն բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից: Վերջինս խարսխված է արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ոստիկանության վարչական ռեգիստրի տվյալների վրա: Այդ տարբերությունը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ: 2022 թվականի դրությամբ ՀՀ-ում այդ տարբերությունը կազմել է 10,45% [մանրամասն տես թիվ 18 սկզբնաղբյուրը]: Ըստ այդմ՝ Տավուշի մարզի գյուղական բնակչությունը 2022 թվականին համայնքների կողմից ներկայացրած «գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվությունների հիման վրա կազմել է 72145 մարդ, այսինքն՝ 2145-ով ավելի վերը նշված տվյալից:

Բնակչության միջին խտությամբ (44 մարդ/կմ^2) Տավուշի մարզն ավելի քան 2,1 անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին: Բնակչության 58,5%-ն ապրում է գյուղական բնակավայրերում, որոնց ընդհանուր թիվը 60 է, սակայն երկու գյուղ չունեն մշտական բնակչություն:

ՀՀ-ում մինչև 800 մ բարձրություններում ապրող գյուղական բնակչության մոտ 77%-ը և գյուղերի թվի 67%-ը գտնվում են Տավուշի մարզում[20]: Մարզին բնորոշ է գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցումը՝ բնակավայրերը և բնակչությունը առավելապես կուտակված են լեռնահովիտներում և գետահովիտների ավելի ցածրադիր հատվածներում, ինչպես նաև ճանապարհների երկայնքով: Գետահովիտներում ձևավորվել են տարաբնակեցման խմբային ձևեր:

Աղյուսակ 3.

Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի

բաշխումն ըստ գյուղերի մարդաքանակի 2022թ.[15]:

Համայնքներ	Գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի /մարդ/											
	Մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Իջևան	1	172	5	1669	5	3035	5	10103	3	10905	19	25884
Բերդ	-	-	4	1537	4	3090	8	12824	-	-	16	17451
Նոյեմբերյան	1	163	3	1166	6	4266	5	8315	2	7848	17	21758
Դիլիջան	-	-	3	1017	-	-	2	2536	1	3499	**8**	7052
Ընդամենը մարզում	2	335	15	5389	15	10391	20	33778	6	22252	60	72145

Մարզի գյուղական բնակչության 89,5 և մշտական բնակեցված գյուղերի մոտ 88%-ը տեղաբաշխված են ծովի մակարդակից 400-ից մինչև 1200 մ բարձրություններում, իսկ 1201-1400 մ բարձրության գոտուն բաժին է ընկնում գյուղական բնակչության 8,6%-ը: Մարզի տարածքի 42%-ը կազմող ծովի մակարդակից 1400 մ-ից բարձր շրջաններում կա ընդամենը 4 գյուղական բնակավայր, որից երկուսը զուրկ են մշտական բնակչությունից [աղ.4]:

Աղյուսակ 4.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների 2022թ.[15]:

Համայնքներ	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների /մետր/													
	Մինչև 800		801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Իջևան	13	17707	5	7676	1	501	-	-	-	-	-	-	19	25884
Բերդ	5	3912	4	5429	2	2079	3	4718	2	1313	-	-	16	17451
Նոյեմբերյան	13	14508	4	7250	-	-	-	-	-	-	-	-	17	21758
Դիլիջան	-	-	-	-	4	5528	2	1524	-	-	2	0	8	7052
Ընդամենը մարզում	31	36127	13	20355	7	8108	5	6242	2	1313	2	0	60	72145

Աղյուսակ 5.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացն ըստ մարդաքանակի (1926-2022թթ.)[8,15,17,21]:

Տարեթվեր	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի /մարդ/											
			Մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	100	62620	43	3067	18	5555	17	11877	21	35605	-	-	1	6516
1970	63	84862	2	281	12	4275	19	13847	25	46454	5	20005	-	-
2011	59[2]	74423	2	208	13	4804	18	12928	21	37489	5	18994	-	-
2022	58[2]	72145	2	335	15	5389	15	10391	20	33778	6	22252	-	-
Նույնը տոկոսներով														
1926	100.0	100.0	43.0	4.9	18.0	8.9	17.0	19.0	21.0	56.8	-	-	1.0	10.4
1970	100.0	100.0	3.2	0.3	19.0	5.0	30.2	16.3	39.7	54.8	7.9	23.6	-	-
2011	100.0	100.0	3.4	0.3	22.0	6.4	30.5	17.4	35.6	50.4	8.5	25.5	-	
2022	100.0	100.0	3.4	0.5	25.9	7.4	25.9	14.4	34.5	46.9	10.3	30.8	-	-

Մինչև 1970-ական թվականները Տավուշի մարզում, ըստ մարդաքանակի, մեծ թիվ էին կազմում մանր և փոքր (մինչև 500 մարդ) գյուղական բնակավայրերը: 1926թ. այդպիսիք կազմում էին մարզի գյուղերի ընդհանուր թվի 61%-ը, դրանց բաժին էր ընկնում գյուղական բնակչության ընդամենը 13,8%-ը: Ըստ գերակշռող մարդաքանակի՝ մարզում 1926թ. շատ էին մեծ (1000-3000) և միջին մեծության (500-1000) գյուղերը, որոնց բաժին էր ընկնում գյուղական բնակչության 75,8%-ը, իսկ գյուղերի ընդհանուր թվի 37%-ը (աղ.5): 1926-1970թթ.-ի ընթացքում մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցած առավել էական փոփոխությունը գյուղերի խոշորացումն էր և ըստ գերակշռող մարդաքանակի՝ գյուղական տարաբնակեցման բնույթի փոփոխությունը[8]: 1970-2022թթ.-ին մարզում գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 14862-ով: Այդ ընթացքում ըստ մարդաքանակի մարզի գյուղական բնակավայրի թվաքանակում փոփոխություններն մեծ չեն(աղ.5):

Աղյուսակ 6.

Տավուշի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացն ըստ բարձրության գոտիների (1926-2022թթ) [8,15,17,21]:

Տարեթվեր	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների													
			մինչև 800 մ		801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000	
			Ա	բ	Ա	բ	Ա	բ	Ա	բ	Ա	բ	Ա	բ	Ա	բ
1926	100	62620	27	20714	20	19608	13	5494	10	13711	15	1862	5	523	10	708
1970	63	84862	30	36875	17	26603	6	9171	6	9877	2	1921	2	415	-	-
2011	59[2]	74423	31	36836	13	20698	7	8934	5	6587	2	1357	1	8	-	-
2022	60	72145	31	36127	13	20355	7	8108	5	6242	2	1313	2	0	-	-
Նույնը տոկոսներով																
1926	100.0	100.0	27.0	33.1	20.0	31.3	13.0	8.8	10.0	21.9	15.0	3.0	5.0	0.8	10.0	1.1
1970	100.0	100.0	47.6	43.5	27.0	31.4	9.5	10.8	9.5	11.6	3.2	2.2	3.2	0.5	-	-
2011	100.0	100.0	52.5	49.5	22.0	27.8	11.9	12.0	8.5	8.9	3.4	1.8	1.7	0.0	-	-
2022	100.0	100.0	52.5	50.2	22.0	28.2	11.9	11.2	8.5	8.6	3.4	1.8	1.7	0.0	-	-

Ներկայումս մարզում առավել ընդգծված է դառնում ըստ գերակշռող մարդաքանակի մեծ և խոշոր գյուղերի դերի բարձրացումը: 2022թթ. այդպիսի գյուղերում (դրանք թվով 26-ն են) ապրում էր մարզի գյուղական բնակչության 77,7 %-ը: Այսինքն՝ մարզում առկա է ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման բնույթի բևեռացում: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ մարզում մեծ և խոշոր գյուղերի բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել ոչ թե դրանցում բնակչության բացարձակ թվի ավելացման, այլ մարդաշատությամբ ավելի փոքր խմբերում գյուղերի միջին մարդաշատության նվազման հետևանքով[8]:

Տավուշում ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրության գոտում 1926-2022թթ.-ի ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակչության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում: Եթե 1926թ. նշված շրջաններին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 64,4%-ը, ապա 2022թ.-ին՝ 78.1%-ը:

Աղյուսակ 7.

Տավուշի մարզի առանձին գյուղերի բնակչության թվի շարժընթացը /1988-2022 թթ./:

Գյուղերը	Բնակչության թիվն ըստ տարիների /մարդ/			
	1988թ.	2001թ.	2011թ.	2022թ.
Բագրատաշեն	1759	3023	2732	2842
Բարեկամավան	743	532	345	163
Կողբ	4633	4610	4420	4601

Զորավան	1368	1089	891	818
Կոթի	2243	2225	2014	1930
Այգեձոր	2688	2701	2044	1638
Մոսեսգեղ	2416	2212	1748	1443
Չինարի	1329	1252	887	813
Չինչին	658	713	558	387
Վերին կարմիրաղբյուր	1818	1948	1632	1507
Ազատամուտ	3800	2446	2513	2862
Աղավնավանք	741	417	337	237
Աչաջուր	3794	4513	4258	4195
Բերքաբեր	497	491	465	377
Լուսահովիտ	306	363	364	316
Կիրանց	251	329	352	315
Հովք	678	499	435	428
Դեբեդավան	758	763	669	553
Ոսկեպար	1174	956	818	723
Պառավաքար	1635	1730	1464	1532

Ընդհանուր առմամբ Տավուշի մարզում ևս անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել առավել ցածրադիր շրջանների գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացում: Ծովի մակարդակից մինչև 1200 մ բարձրություններում ապրող բնակչության մասնաբաժինը 1926 թվականի համեմատությամբ 2022 թվականին ավելացել է 16,3 տոկոսային կետով[աղ.6]:

Մարզի գյուղական բնակավայրերի բնակչության թվի շարժընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անցած 35 տարում՝ 1988-2023թթ.-ին, բացառությամբ առանձին դեպքերի, բնակչության թիվը նվազել է բոլոր բնակավայրերում[աղ.7]: Ընդ որում բնակչության թիվը նվազել է ոչ միայն փոքր՝ մինչև 200 մարդ, և միջին մեծության՝ 200-500 մարդ ունեցող գյուղերում, այլ նաև մեծ և խոշոր գյուղերում[աղ. 7]: Այսպես, Այգեձոր գյուղի բնակչության թիվը 2022 թվականին 1988-ի համեմատ պակաս է 1050-ով, Ազատամուտինը՝ 938-ով, Ոսկեպարինը՝ 451-ով և այլն: Այսինքն՝ ավելի քան երեքուկես տասնամյակի ընթացքում մարզի գյուղերի մեծ մասը ոչ միայն չի ունեցել բնակչության թվի ավելացում, այլ ընդհակառակը՝ նվազել է:

Ցանկացած տարածքում գյուղական բնակավայրերի զարգացման համար առանձնակի նշանակություն ունի դրանցում առկա ժողովրդագրական գործընթացները, մասնավորապես բնակչության վերարտադրության պատկերը: Վերջին շուրջ երեքուկես տասնամյակում առկա սոցիալ-տնտեսական ծանր

պայմանները, մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայուն վիճակը և տեղային այլ գործոններն իրենց ազդեցությունն են թողել Տավուշի մարզի գյուղական բնակչության վերարտադրության գործընթացների վրա: Այդ ամենը նվազեցրել են մարզի գյուղերի տնտեսական ներուժը և պատճառ դարձել դրանց ժողովրդագրական իրավիճակի վատթարացման ու արտագաղթի:

Աղյուսակ 8.

Տավուշի տարածաշրջանների գյուղական բնակչության բնական շարժի գործակիցները, 2010-2020թթ., ‰ [19, 22]:

	Ծնելիություն,‰		Մահացություն,‰		Բնական հավելաճ,‰	
	2010 թ.	2020թ	2010թ.	2020թ	2010թ.	2020թ.
Իջևանի տ/շ	15.8	11.1	9.1	10.0	6.7	1.1
Դիլիջանի տ/շ	15.3	17.3	10.2	14.4	5.2	2.9
Նոյեմբերյանի / տ/շ	12.1	9.1	8.4	13.1	3.7	-4.0
Տավուշի տ/շ	9.7	8.3	14.7	16.6	-5.0	-8.3
ՀՀ , գյուղական	14.9	10.3	9.1	10.8	5.8	-0.5
ՀՀ , քաղաքային	14.6	13.4	9.2	13.0	5.4	0.4

2010-2020թթ. Տավուշի մարզի գյուղական բնակչության վերարտադրության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում առկա է ծնելիության նվազման, մահացության ավելացման և բնական հավելաճի նվազման միտում [աղ.8]: Այդ երևույթը բնորոշ է մարզի բոլոր տարածաշրջաններին, սակայն դրությունն առավել տագնապալի է Տավուշի տարածաշրջանի գյուղական բնակչության շրջանում և բնակավայրերում, որտեղ 2020 թվականի ծնելիությունը կազմել է 8,3% , մահացությունը՝ 16.6%, բնական հավելաճը՝ - 8,3% [աղ.8]:

Ամփոփում: Տարաբնակեցման մեջ տեղի ունեցող փոփոխությունները և զարգացման միտումներն առանձնահատուկ գծերով է դրսևորվում լեռնային երկրներում և նրա առանձին տարածաշրջաններում, մասնավորապես ՀՀ սահմանամերձ մարզերից մեկում՝ Տավուշում: Ինչպես ՀՀ մյուս տարածքներում, այնպես էլ Տավուշում գյուղական տարածքների ու ողջ տարաբնակեցման համակարգի ձևավորումը և զարգացումը տեղի է ունեցել մարզի բնաաշխարհագրական, պատմական, սոցիալ-տնտեսական, ենթակառուցվածքային, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և տեղային նշանակության այլ պայմանների ու գործոնների ներգործության տակ:

Անցած տասնամյակների ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, տարածաշրջանային և տեղային նշանակության գործընթացներն իրենց ազդեցություն են թողել Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման, մասնավորապես գյուղերի մարդաքանակի և գյուղական բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա: Այդ երևույթն առավել ակնհայտ է դրսևորվել անկախության անցած ժամանակահատվածում, որը հանգեցրել է մարզում առկա՝ ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման բնույթի բևեռացման էլ ավելի խորացման: Ընդ որում ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման բնույթի բևեռացումն առավելապես տեղի է ունեցել մարդաշատությամբ փոքր գյուղերի խմբերում բնակչության թվի նվազման հետևանքով:

Տավուշի մարզում գյուղական տարաբնակցման և առանձին գյուղական բնակավայրերի բնակչության թվի շարժընթացի և վերարտադրության ժամանակակից միտումների պահպանումը կարող է հանգեցնել մարզի գյուղական բնակչության թվի էլ ավելի նվազման: Դրա հետևանքով կնվազի նաև մարզի գյուղական տարածքների տարատեսակ ռեսուրսների, մասնավորապես գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները: Դա նշանակում է, որ այդպիսի միտումների պահպանումը կարող է հանգեցնել բնակչության թվով փոքր գյուղերում բազմաթիվ խնդիրների առաջացման՝ ընդհուպ վերջնական բնազրկման:

Հանրապետական, մարզային և համայնքային կառավարման մարմինների հիմնական խնդիրը պետք է լինի Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի, մասնավորապես սահմանամերձ գյուղերում բարենպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորման համար նախադրյալների ստեղծումը և դրանց սոցիալ տնտեսական զարգացման և առաջընթացի ապահովումը: Այդ ամենի շնորհիվ կմեծանա գյուղերի տնտեսաարտադրական ներուժը, արդյունավետ կօգտագործվեն գյուղական տարածքների գյուղատնտեսական, տարածքային և այլ ռեսուրսները: Վերջիններս իրենց դերը կունենան մարզի գյուղերում սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում՝ կնվազի արտագաղթի տեմպը, կմեծանա մարզի գյուղական բնակավայրերի դերը ՀՀ հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանունակության ամրապնդման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պոտոսյան Ա., Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտման տեսական հիմքերը, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 55 (1) 2021, էջ 49-56:
2. Подосян А. А., Сельские местности как предпосылка эффективного использования территории горных регионов (на примере РА), Наука, Инновации технологии, Ставрополь, 2016, N4, с.193-199.
3. Подосян А. А., Роль сельских местностей и расселения в развитии горных стран, на примере Республики Армения // Ученые записки ЕГУ, Геология и география, 2019, 53 (2), с.110-117.
4. Подосян А. А., Потосян В.А., Современные тенденции и проблемы трансформации сельского расселения в горных странах (на примере РА) // Общественная география в меняющемся мире: фундаментальные и прикладные исследования, Материалы международной научной конференции в рамках X научной Ассамблеи Ассоциации российских географов обществоведов (АРГО), Казань 2019, с.182-185.
5. Подосян А. А., *Характерные черты сельских местностей и расселения в Республике Армения (как горной страны).* Социально-экономическая география // Вестник Ассоциации российских географов-обществоведов, 2018, N 7, с.111-123.
6. Potosyan A. H.,Geographical Features and Development Regularities of Rural Areas and Settlements Distribution in Mountain Countries, Annals of Agrarian Science, 2017, N 2.

7. Potosyan A. H.,The Main Development and Transformation of the Rural Settlement in Mountainous Countries (for example the RA), Mountainous Countries (for Example RA), Annals 2014, Vol. 12, p. 70-74 .
8. Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Երևան 2017, 466 էջ, http://publishing.ysu.am/files/ HH_gyughakan_bnakchutyuny_ev_bnakavayrery.pdf
9. Պոտոսյան Ա., ՀՀ-ում բնակչության վերարտադրության ժամանակակից միտումները, տարածքային տարբերությունները և առկա հիմնախնդիրները, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն 54 (1) 2020, էջ 53-61, http://www.ysu.am/files/8.%20Potosyan.pdf
10. Պոտոսյան Ա. Հ., ՀՀ բնակչության թվի շարժընթացի ազդեցությունը տարածքային համաչափ զարգացման վրա, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 54 (3), 2020, էջ 187-194, http://www.ysu.am/files/Vol.54_No.3_2020_pp.187-194.pdf
11. Պոտոսյան Ա., Պոտոսյան Վ., Գյուղական տարաբնակեցման փոփոխությունների ժամանակակից միտումները և հիմնախնդիրները ՀՀ-ում, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 55 (2) 2021, էջ 129-136:
12. Պոտոսյան Ա., ՀՀ գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունները, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 55 (3) 2021, էջ 189-198:
13. Подосян А. А., Основные факторы развития и преобразования сельского расселения в горных странах (на примере РА), Геополитика и экогеодинамика регионов // Научный журнал, том 10, выпуск 2, Симферополь, 2014.
14. Подосян А. А., Географические особенности и закономерности формирования и развития сельских местностей в горных странах (на примере РА) ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 2018 համ. 52.1.
15. Населённые пункты и население Арм. ССР за 1831-1959 гг. // Статистический сборник, Арм. гос. изд.,1962, Ереван, 133 с.
16. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2022:
17. Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2022թ-ի հունվարի 1-ի դրությամբ:
18. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2022:
19. ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանշները, ժողովրդագրական տվյալների բազա, https://www.armstat.am/am/?nid=209
20. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները, Ե., 2003:
21. ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքները, https://armstat.am/am/?nid=187
22. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021:
23. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Ե., 2022, 543 էջ:

CURRENT TENDENCIES AND MAIN PROBLEMS OF RURAL SETTLEMENT DYNAMICS IN TAVUSH REGION

POTOSYAN AKSEL

PhD in Geographical Sciences,

Professor of YSU Ijevan Branch

e-mail: a.potosyan@ysu.am

SAFARYAN SVETA

Lecturer of the Chair of Tourism Management and Cultural Studies,

Faculty of Economics, YSU Ijevan Branch

e-mail: sveta.safaryan@ysu.am

SARIBEKYAN INNA

4th-year student of the Tourism Specialty

at the Faculty of Economics of YSU Ijevan Branch

e-mail: i.saribekyan@list.ru

Changes and development tendencies in settlement patterns have direct and indirect effect upon the distinct territories, regions, various economic sectors and territorial organization of the society. These changes are most uniquely manifested in mountainous countries and their individual regions, particularly in Tavush region of the Republic of Armenia.

The problems of rural settlement in Tavush region became more relevant especially during the years of independence, when their development, strengthening, stabilization, overcoming socio-economic challenges became a strategic issue for the state. Following the military conflicts in 2020, enhancing the infrastructure of border territories in the Republic of Armenia, particularly the rural areas in the Tavush region, is viewed as a crucial element in fortifying the national security framework.

The solution of the existing problems of the rural settlements of Tavush region depends on various factors, with particular emphasis on the development of these settlements, dynamics of rural population number and reproduction, identifying the existing problems and pointing out ways of solution.

The analysis of rural settlement pattern formation and development of Tavush region is carried out in the article. The dynamics of rural settlements, population numbers, reproduction indicators, and the associated problems have been discussed.

Keywords: *Tavush region, rural settlement, rural population and residents, dynamic tendencies, population reproduction, problems.*

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СЕЛЬСКОГО РАССЕЛЕНИЯ В ТАВУШСКОЙ ОБЛАСТИ

ПОТОСЯН АКСЕЛЬ

кандидат географических наук,

профессор Иджеванского филиала ЕГУ

электронная почта: a.potosyan@ysu.am

САФАРЯН СВЕТА

преподаватель кафедры туристического менеджмента и культурологии экономического факультета ИФ ЕГУ

электронная почта: sveta.safaryan@ysu.am

САРИБЕКЯН ИННА

Студентка 4 курса отделения "Туризм"

экономического факультета ИФ ЕГУ.

электронная почта: i.saribekyan@list.ru

Изменения и тенденции развития расселения оказывают прямое и косвенное влияние на развитие различных отраслей хозяйства отдельных территорий, областей и стран, а также на территориальную организацию общества. Эти изменения наиболее своеобразно проявляются в горных странах и их отдельных регионах, в частности, в Тавушской области Республики Армения.

Проблемы сельского расселения Тавушской области стали более актуальными особенно в годы независимости, когда их развитие, укрепление, стабилизация, решение социально-экономических проблем приобрели стратегическую важность для государства. После известных событий 2020 года совершенствование системы расселения приграничных населенных пунктов РА, в том числе сельских районов Тавушской области, считается одной из важных составляющих обеспечения системы безопасности нашей страны.

Решение существующих проблем сельских поселений Тавушского марза зависит от различных факторов, среди которых особое значение имеет сельское расселение: динамика развития расселения, численность сельского населения, современные тенденции воспроизводства, выявление существующих проблем и указание путей их решения.

В статье проводится анализ формирования и развития сельского расселения в Тавушской области. Рассмотрены вопросы динамики сельского населения области, количества населенных пунктов и показателей воспроизводства, а также обусловленные ими проблемы.

Ключевые слова: *Тавушская область, сельское переселение, сельское население и жители, тенденции, воспроизводство населения, проблемы.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.05.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.05.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: